

ԱՂՋԻԿ (ԵՎ ՏՂԱ) ԵՐԵԽԱՅԻ ՏԵՍԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Զեկույցի հեղինակ՝ Մերի Երանոսյան

Պատվիրատու՝ «Վորլդ Վիժն» ՄԲԿ

2019-09-30

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... - 2 -

ԳԼՈՒԽ 1. ԱՂԶԻԿ (ԵՎ ՏՂԱ) ԵՐԵԽԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՒՄ - 3 -

ԳԼՈՒԽ 2. ԱՂԶԻԿ ԵՐԵԽԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ - 17 -

ԳԼՈՒԽ 3. ԱՂԶԻԿ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ - 21 -

ԳԼՈՒԽ 4. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ, ԶԲԱՂՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ - 28 -

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱԶԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 31 -

Սույն զեկույցը գրվել է Վորլդ Վիժն կազմակերպության «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է կանխել և փոխել կանանց ու աղջիկներին վնասող կարծրատիպային վերաբերմունքն ու վարքագիծը, նպաստել այնպիսի միջավայրի ստեղծմանը, ուր աղջիկներն ու տղաները ծնվում ու արժևորվում են հավասարապես:

Զեկույցի հիմնական նպատակն է ցույց տալ Աղջիկ (և տղա) երեխաների տեսանելիությունը պետական վիճակագրական տվյալներում, օրենքներում և ռազմավարություններում: Այս նպատակին հասնելու համար՝ փաստաթղթերի վերլուծության մեթոդն է կիրառվել, ինչպես նաև փորձագիտական հարցումներ են իրականացվել՝ ոլորտին քաջատեղյակ մասնագետների հետ:

Զեկույցի առաջին գլխում նկարագրվել է Աղջիկ (և տղա) երեխաների տեսանելիությունը 2011 թ.-ի մարդահարում, ԱրմՍտատԲանկում, գենդերային վիճակագրությունում: Զեկույցի երկրորդ մասում քննարկվել է երեխաների, մասնավորապես Աղջիկ երեխայի ներկայությունը քաղաքականությունների զարգացման ռազմավարություններում և միջոցառումներում: Երրորդ գլխում անդրադարձ է արվել Աղջիկ երեխայի և նրա մասին տվյալների այն խնդիրներին, որոնց անդրադարձել են փորձագետները և «Երեխաների երեխաների իրավունքների մասին կոնվենցիան կիրառելու» ձեռնարկը: Զեկույցի չորրորդ գլխում ներկայացվել են Երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների փորձառությունները՝ Աղջիկ (և տղա) երեխաների հետ աշխատելիս: Զեկույցն ամփոփում է Եզրակացություններ և Առաջարկություններ բաժինը:

Զեկույցի հեղինակը իր խորին շնորհակալությունն է հայտնում բոլոր այն կանանց, ովքեր ժամանակ են տրամադրել հարցաթերթերը լրացնելու համար և աջակցությունն են ցուցաբերել զեկույցը պատրաստելու ընթացքում, մասնավորապես՝ Աննա Չիլինգարյանին, Լուսինե Սարգսյանին, Սևան Պետրոսյանին, Աիդա Մուրադյանին, Լիլիթ Չիթյանին, Նվարդ Մանասյանին, Լուսինե Սաղումյանին:

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) 1993 թ.-ին վավերացրել է Երեխայի իրավունքների մասին Միացյալ Ազգերի Կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) կոնվենցիան¹ և ստանձնել մի շարք պարտավորություններ, որոնց իրականացումը վերահսկում է ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտեն): Այս գործընթացը ներառում է Կոմիտեի և ՀՀ կառավարության, Մարդու Իրավունքներ պաշտպանի և քաղաքացիական հասարակության կառույցների միջև զեկույցների փոխանակում, որոնք անդրադառնում են երեխաների իրավունքների պաշտպանության հարցում առաջընթացների և խնդիրների քննարկմանը:

Կոմիտեն 1992 թ.-ից ի վեր երկու տարին մեկ պարբերությամբ ընդհանուր քննարկման նիստեր է իրականացնում: 1995 թ.-ի «Ընդհանուր Քննարկման Օրերի» թեմա հռչակվում է «Աղջիկ Երեխան»: Նշելով, որ Աղջիկ Երեխան պետք է դիտվի որպես անհատ և ոչ միայն որպես դուստր, քույր, կին կամ մայր, Կոմիտեն շեշտում է, որ աղջիկ երեխայի իրավունքները ոչ թե պետք է անտեսվեն, այլ հակառակը՝ բարձրաձայնվեն և պաշտպանվեն: Կոմիտեն կարծում է, որ ավանդույթներում ու նախապաշարումներում արմատացած և կանանց դեմ ուղղված արատավոր դրսևորումները հաղթահարելու միջոց է Աղջիկ երեխայի և նրա իրավունքների վրա կենտրոնանալը: Ըստ Կոմիտեի միայն աղջիկ երեխաների ակտիվ ներգրավմամբ է հնարավոր մեկնարկել փոփոխության/բարելավման շարժում՝ թույլ չտալով, որ կանանց կյանքի ցիկլը (որտեղ աղջիկ երեխան արմատական տեղ է զբաղեցնում) վերածվի արատավոր շրջանի, ուր ֆատալիզմն ու թերարժեքության զգացողությունը կապական են մանկությունն ու չափահաս կյանքը:

«Աղջիկ երեխաների (սկսելով ավելի վաղ սերնդից) իրավունքների խթանմանն ու պաշտպանությանն ուղղված համապարփակ ռազմավարության միջոցով միայն հնարավոր կլինի ստեղծել ընդհանուր և հեռահար մոտեցում, ինչպես նաև քարոզչության և իրազեկման ընդգրկուն շարժում, որի նպատակը կլինի խթանել կանանց ինքնագնահատականի և այնպիսի հմտությունների ձեռք բերմանը, որոնք կնախապատրաստեն նրանց ակտիվորեն մասնակցել (իրենց վրա անդրադարձող) որոշումներ կայացնելուն և գործողությունների դիմելուն: Նման

¹ Տե՛ս, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, <http://www.parliament.am/library/mi%20mijazgayin%20akter/8.pdf>

մոտեցումը պետք է հիմնվի մարդու իրավունքների՝ որպես գենդերային նախապաշարումից զերծ համընդհանուր և անատարկելի իրականության ճանաչման վրա»²:

ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական մարմինները, Մարդու Իրավունքների Պաշտպանի գրասենյակը, երեխաների իրավունքներով զբաղվող միջազգային, հասարակական կազմակերպությունների, ոչ ֆորմալ խմբերի և անհատների գործունեությունը փաստացի նպատակաուղղված է կյանքի կոչել Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան: Այս գործընթացում առավելագույն ներգրավվածություն ունի Յունիսեֆը: Վերջինս անդամ պետություններին տրամադրում է խորհրդատվություններ (մինչև պետությունները կկազմեն և կուղարկեն իրենց զեկույցները Կոմիտեին), մշակում է կոնվենցիան կիրարկելու ռազմավարություններ (հիմնվելով Կոմիտեի առաջարկությունների վրա), միաժամանակ աջակցում է Կոմիտեին՝ պետությունների կողմից գրված զեկույցները վերանայելու գործում և խրախուսում է քաղաքացիական հասարակությանը ներկայացնել իր զեկույցը Կոմիտեին³:

Աղջիկ երեխաների խնդիրները բարձրաձայնելու և առաջընթացները գրանցելու նպատակով՝ ՄԱԿ-ի կողմից հոկտեմբերի 11-ը (2012 թ.-ից ի վեր) հռչակվել և տոնվում է որպես «Աղջիկ Երեխայի» միջազգային օր: 2016 թ.-ի «Աղջիկ Երեխայի» օրվա քարոզարշավի թեման էր՝ «Աղջիկների առաջընթացը (=) Նպատակների առաջընթացն է»: «Աղջիկ երեխայի մասին տվյալների գլոբալ շարժում» վերնագրի ներքո ամփոփվել են արշավի հիմնական ուղերձները:

- Ներդրում անել չի նշանակում միայն ավելի շատ փող հատկացնել, այն պահանջում է աղջիկ երեխայի մասին խորը գիտելիք/տեղեկատվություն և աղջիկ երեխային թիրախավորող գործողություններ:
- Այն մարտահրավերների (դժվարությունների), հնարավորությունների և հաջողությունների մասին, որոնց առերեսվում են աղջիկ երեխաները, կա սահմանափակ տեղեկատվություն և այս բացն անհրաժեշտ է հաղթահարել:

² *Stéu, The Girl Child, CRC/C/38, 8th Session, 21 January 1995,*
<https://www.ohchr.org/EN/HRBodies/CRC/Documents/Recommandations/girl.pdf>, ներկայացված է հեղինակի թարգմանությամբ:

³ *Stéu, UNICEF's role in promoting and supporting the Convention on the Rights of the Child,*
<https://www.unicef.org/child-rights-convention/unicef-role>

- Ունենալով տվյալներ, կարող ենք ունենալ տվյալների վրա հիմնված լուծումներ:
- Աղջիկները՝ տվյալներ ստանալու ամենալավ աղբյուրներից մեկն են, մենք պետք է լսենք նրանց, երբ ասում են, թե ինչ են ցանկանում:
- Աղջիկ երեխաների մասին տվյալների մեջ ներդրում անելը կօգնի կառավարություններին և գործընկերներին բոլոր տարիքի աղջիկ երեխաների մասին տեղեկատվություն հավաքագրելու, վերլուծելու և տարածելու հարցերում⁴:

Երեխաների մասին տվյալների հավաքագրումն ու վերլուծության ընթացքում տվյալների առանձնացումը ըստ սեռի՝ այն նախապայմաններից մեկն է, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրվող նյութի մեջ նոր բացահայտումներ անել, ինչի արդյունքում թիրախավորված քաղաքականություն կարող է մշակվել տարբեր սեռի և տարիքային խմբերի երեխաների կարիքները և/կամ խնդիրները լուծելու, ինչպես նաև հաջողությունները գրանցելու համար:

Հարկ է նշել, որ հազվադեպ չեն այն դեպքերը, երբ հանրությանը հասանելի/«բաց» վիճակագրական տվյալները առավել հաճախ կենտրոնանում են կա՛մ միայն տարիքային կազմի վրա, կա՛մ տվյալները ներկայացվում են միայն ըստ սեռի: Տարիքային խմբերի համար ընտրված միջակայքերը հաճախ անհնար են դարձնում ընդհանուր տվյալներից աղջիկ և տղա երեխաների բացարձակ կամ հարաբերական թվերը ամբողջությամբ, այն է՝ 0-17 տարեկանների կտրվածքով դուրս բերելը:

ՀՀ վիճակագրական կոմիտեն այն մարմինն է, որն իրականացնում է մարդահամար, միառժամանակ, բոլոր պետական կառույցներից ստացված տվյալները իմի է բերում և հանրությանն է ներկայացնում ամփոփված տվյալները ըստ տարիների, թեմաների և այլն⁵: Աղջիկ երեխայի մասին տվյալներ փնտրելիս՝ հետազոտողները, ծրագրեր/նախագծեր իրականացնողները, քաղաքականություն մշակողները և այլոք կնկատեն, որ երեխաների մասին (և մասնավորապես աղջիկ երեխաների

⁴ Տե՛ս, Key Messages: Girls' Progress = Goals Progress, https://www.unicef.org/gender/files/IDG-2016_Key_Messages.pdf, ներկայացված է հեղինակի թարգմանությամբ:

⁵ Տե՛ս, ՀՀ վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/am/>

մասին) տվյալները հաճախ առանձնացված չեն ներկայացվում, ինչը նշանակում է, որ *աղջիկ և տղա երեխաները բավարար չափով տեսանելի չեն տվյալներում:*

ԱՂՋԻԿ (ԵՎ ՏՂԱ) ԵՐԵՒԱՆԵՐԸ 2011 Թ.-Ի ՄԱՐԴԱՀԱՄԱՐՈՒՄ

- 2011 թ.-ի մարդահամարի Մաս II-ի Բաժին 1.-ը անդրադառնում է առկա և մշտական բնակչության թվաքանակին ըստ վարչատարածքային (քաղաք, գյուղ) բաշխվածության⁶ : Աղյուսակների ճնշող մեծամասնությունում տվյալները ներկայացված են ըստ սեռի, սակայն ոչ ըստ տարիքի (երեխաներն առանձին չեն ներկայացվում) ու թեև 7 աղյուսակներից 1-ը՝ Աղյուսակ 1.4-ը⁷, առկա և մշտական բնակչության տվյալները տրամադրում է ըստ և՛ սեռի, և՛ տարիքի՝ այն միառժամանակ բաց է թողնում վարչատարածքային բաշխումը: Այսպիսով, տվյալներից օգտվողը չի կարող հասկանալ, թե տարբեր մարզերում առկա և մշտապես բնակվող երեխաների՝ աղջիկների ու տղաների թիվը որքան է:
- Բաժին 2.-ը անդրադառնում է մշտական բնակչության ամուսնական կարգավիճակին ու կանանց ծնելիությանը: Աղյուսակ 2.1-ում⁸ տվյալները ներկայացված են ըստ թե՛ տարիքի, թե՛ սեռի և թե՛ ամուսնական կարգավիճակի: Այս տվյալները թույլ են տալիս հետազոտողներին տեսնել, որ 15, 16 և 17 տարեկան տղա երեխաները գրանցված ամուսնություն չունեն, իսկ 17 տարեկան 344 աղջիկ երեխա գրանցված ամուսնություն է ունեցել 2011 թ.-ին: Երկու անգամ ավելի շատ աղջիկ, քան տղա երեխա է առանց գրանցվելու «ամուսնացել» 16 և 17 տարեկանում: Նույն բաժնի Աղյուսակ 2.2-ը անդրադառնում է կանանց՝ ըստ տարիքի և երբևէ ծնած երեխաների թվաքանակի⁹: Այստեղ, տարիքային խմբերի միջակայքերից մեկը, օրինակ՝ 15-19 տարեկան, հնարավորություն չի տալիս հասկանալ, թե արդո՞ք քանի աղջիկ երեխա է երբևէ ծնել երեխա, քանի որ այս տարիքային խմբի մեջ են ինչպես 15, 16 և 17 տարեկան աղջիկ երեխաները, այնպես էլ երեխա չհամարվող 18 և 19 տարեկան երիտասարդները¹⁰: Տարիքային խմբերը նման միջակայքերով (օրինակ՝ 15-19 տարեկան) առանձնացնելը անհնար է դարձնում երեխաների մասին ամբողջական տեղեկատվություն ստանալը: Աղյուսակ 2.3-ը անդրադառնում է կանանց՝ ըստ տարիքի և ողջ մնացած

⁶ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/am/?nid=532>

⁷ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478228.pdf>

⁸ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478253.pdf>

⁹ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478253.pdf>

¹⁰ Ըստ Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի, երեխա է համարվում մինչև 18 տարեկան անձը: Տե՛ս, Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք, Հոդված 1, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69115>

երեխաների թվաքանակի և կրկին 15-19 տարիքային միջակայքի պատճառով աղջիկ երեխաների մասին ոչ մի դիտարկում անել հնարավոր չէ¹¹:

- Բաժին 3.-ում ¹² մշտական բնակչության կրթական մակարդակի մասին տվյալներում, որտեղ բնակչությունը ըստ կրթական մակարդակի, սեռի և տարիքի է ներկայացված, աղջիկ երեխաների մասին տվյալները մասամբ են տեսանելի, քանի որ ընտրված տարիքային խմբերն են՝ 6-9, 10-14 և 15-19-ը:

Հարկ է նշել, որ 2013 թ.-ից ներդրվել է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ¹³ (emis.am), որի շնորհիվ հնարավոր է բացի ստատիկ հաշվետվություններից, նաև կազմել հաշվետվություններ ըստ ընտրված փոփոխականների և վերլուծական գործիքների: Ստատիկ հաշվետվություններում տվյալները ներկայացված են «աղջիկ երեխայի» և ընդհանուրի թվերի կտրվածքով¹⁴, ինչն ավելի շուտ բացառիկ մոտեցում է: Այս համակարգում երեխաների մասին կրթության ոլորտի հետ կապված մի շարք տվյալներ կարելի է ստանալ ըստ սեռի և տարիքի (ի դեպ՝ տարիքը կարող է ընտրվել որպես միջակայք կամ թիվ), մարզի և բնակավայրի տիպի, ֆունկցիոնալ դժվարությունների (օրինակ՝ լսողական, շարժողական, մտավոր, ձայնի և խոսքի և այլն), կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի, քաղաքացիության, ազգության, կեցության կարգավիճակի և միգրացիոն ու այլ ցուցանիշների¹⁵:

- Բաժին 4.-ում մշտական բնակչության տնտեսական բնութագրերը հիմնականում ներկայացվում են ըստ սեռի: Ըստ տարիքի և սեռի տրվում է տնտեսապես ակտիվ բնակչության զբաղմունքը, սակայն տարիքային խումբը այստեղ նույնպես ներկայացվում է 15-19 միջակայքով¹⁶:
- Բաժին 5.-ում մշտական բնակչության տնտեսական բնութագրերի մի մասը ներկայացվում է ըստ սեռի, իսկ մյուս մասը՝ ըստ տարիքի և սեռի:

¹¹ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478263.pdf>

¹² Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478273.pdf>

¹³ Տե՛ս, Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, <https://emis.am>

¹⁴ Տե՛ս, Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, <https://reports.emis.am/schools-static-reports/am>

¹⁵ Տե՛ս, Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, <https://reports.emis.am/schools-manual-reports>

¹⁶ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478313.pdf>

Բնակչության գոյության միջոցի հիմնական աղբյուրների մասին տվյալները տարրանջատված ըստ սեռի և տարիքի, սակայն մասամբ են տեղեկատվություն տրամադրում աղջիկ և տղա երեխաների մասին, քանի որ ընտրված տարիքային խմբերն են՝ 0-14 և 15-24¹⁷: Ըստ տարիքի և սեռի տրվում է նաև տնտեսապես ակտիվ բնակչության զբաղմունքը, տնտեսական ակտիվությունը, զբաղվածությունը և գործազրկությունը, տնտեսական գործունեություն տեսակները, գործազուրկների թիվը և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության աշխատանք չփնտրելու պատճառները: Թվարկված բոլոր տվյալներում աղջիկ և տղա երեխաներին առանձնացնել հնարավոր չէ, քանի որ տարիքային խումբը այստեղ նույնպես ներկայացվում է 15-19 միջակայքով¹⁸:

Տարիքային խմբերը տարբեր միջակայքերով ներկայացնելը, թեև կարող է բացատրվել մեթոդական նրբություններով, այն այնուամենայնիվ լուրջ մարտահրավեր է հանդիսանում երեխաների և մասնավորապես լուսանցքում հայտնված աղջիկ երեխաների (15-17 տարեկան) մասին տվյալներ ստանալիս:

- Բաժին 5.-ում մշտական բնակչության ազգային կազմի, լեզուներին տիրապետելու և կրոնական դավանանքի տվյալները հիմնականում ներկայացված են ըստ սեռի: Աղյուսակ 5.1-ում բնակչության (քաղաքային և գյուղական) ազգությունը տրված է ըստ սեռի և տարիքի: Տարիքի բաշխվածությունը կառուցվել է հետևյալ միջակայքերով՝ 0-9, 10-19 և այլն¹⁹: Նույն պատկերն է Աղյուսակ 5.6-ում, որտեղ բնակչության (քաղաքային և գյուղական) կրոնական դավանանքը ներկայացված է ըստ սեռի և տարիքի՝ 0-9, 10-19 և այլն²⁰:
- Բաժին 6.-ում մշտական բնակչության տեղաշարժի/միգրացիայի տվյալները հիմնականում ներկայացված են և՛ ըստ սեռի, և՛ ըստ տարիքի: Այն բոլոր

¹⁷ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478298.pdf>

¹⁸ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478313.pdf>,
<https://www.armstat.am/file/doc/99478318.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99478333.pdf>,
<https://www.armstat.am/file/doc/99478343.pdf>

¹⁹ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478353.pdf>

²⁰ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478603.pdf>

աղյուսակներում, որտեղ տրվում է տարիքը (Աղյուսակ 6.1, 6.2-1,6.2-2, 6.3) բաշխվածությունը հետևյալ կերպ է արված՝ 0-9, 10-19 և այլն²¹:

- Բաժին 7-ը տնային տնտեսությունների քանակի և կազմի մասին է, որտեղ Աղյուսակ 7.2-ում ²² և Աղյուսակ 7.3-ում ²³ ներկայացվում են տնային տնտեսությունների անդամները (քաղաքային, գյուղական) ըստ նուկլեար ընտանիքի տիպի (միայն Աղյուսակ 7.2-ում), ազգակցական կապի, սեռի և տարիքի: Առաջին աղյուսակում տարիքը ներկայացված է 0-4, 5-9, 10-14, 15-19 միջակայքերով, իսկ երկրորդում՝ 0-9, 10-19 միջակայքերով: Աղյուսակներ 7.5-ը և 7.6-ը բաշխում է տնային տնտեսությունները (քաղաքային և գյուղական) ըստ տիպի, կազմի և 1) 0-17 տարեկան երեխաների թվաքանակի (Աղյուսակ 7.5) կամ 2) 0-15 տարեկան խնամամակալության տակ գտնվող երեխաների (Աղյուսակ 7.6): Այս աղյուսակները միակն են, որ ամբողջությամբ նվիրված են երեխաներին, սակայն տվյալները այստեղ առանձնացված չեն ըստ սեռի ինչը նշանակում է, որ, օրինակ՝ տվյալներից օգտվողը չի կարող պատկերացում կազմել, թե խնամակալության տակ գտնվող 0-15 տարեկան երեխաների որ մասն է աղջիկ երեխա:
- Աղյուսակ 8 -ում տրվում է տեղեկատվություն տնային տնտեսությունների և բնակարանային պայմանների մասին, որոնք սեռա-տարիքային բաշխվածության չեն ենթարկվում: Այնուամենայնիվ, թե աղջիկ և տղա երեխաներից քանիսն են եղել 130 անօթևան տնային տնտեսությունների 398 անդամների մեջ հայտնի չէ (Աղյուսակ 8.1)²⁴:

2011 թ.-ի մարդահամարի յուրաքանչյուր բաժինն այսքան մանրամասն քննարկելու նպատակն էր ցույց տալ, որ ընդհանուր տվյալներից աղջիկ և տղա երեխաներին (0-17 տ.) առանձնացնելու անհնարինությունը փաստում է, որ եթե ոչ ամբողջությամբ, ապա մասամբ երեխաները պաշտոնական տվյալներում մնում են **ԱՆՏԵՍԱՆԵԼԻ** և հետևաբար հատուկ ուշադրության չեն արժանանում:

²¹ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478353.pdf>

²² <https://www.armstat.am/file/doc/99478438.pdf>

²³ <https://www.armstat.am/file/doc/99478443.pdf>

²⁴ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99478488.pdf>

ԱՂՋԻԿ (ԵՎ ՏՂԱ) ԵՐԵԽԱՆԵՐԸ ԱՐՄՍՏԱՏԲԱՆԿ-ՈՒՄ

ՀՀ վիճակագրական կոմիտեի ԱրմՍտատԲանկը²⁵ հնարավորություն է տալիս 2008-2018 թթ.-ի որոշ տվյալներ առանձնացնել կա՛մ ըստ սեռի, կա՛մ ըստ տարիքի, ընդ որում՝ ընտրված միջակայքերի պատճառով երեխաների մասին տվյալներ դուրս բերել այստեղ ևս հնարավոր չէ:

Զբաղվածությունը ըստ տարիքի և սեռի²⁶

Զբաղվածություն (15-75 տարեկաններ) , ըստ ցուցանիշների և ըստ տարիների

	2017
Զբաղվածներ - ըստ սեռի - կին	481.9
Զբաղվածներ - ըստ տարիքային խմբերի, 15-19	10.9

Երեխաների մասին տեղեկատվություն կարելի է ստանալ միայն այն դեպքերում, երբ ցուցանիշներն իրենց մեջ պարունակում են աղջիկ և տղա բառերը:

Երեխաների մասին ԱրմՍՏատԲանկ-ի տվյալները ամփոփված են կրթության և սոցիալական բաժնում, ընդ որում՝ սոցիալական բաժնում անդրադարձ կա միայն մանկատներին:

Մանկատներում աղջիկ և տղա երեխաների թիվը²⁷

Մանկատներ , ըստ ցուցանիշների և ըստ տարիների

	2016	2017	2018
Աղջիկ խնամյալների թվաքանակը տարեսկզբին, մարդ	407.0	367.0	382.0
Տղա խնամյալների թվաքանակը տարեսկզբին, մարդ	457.0	444.0	442.0

²⁵ Տե՛ս, ՀՀ վիճակագրական Կոմիտե (ԱՐՄՍՏԱՏ), <https://www.armstat.am/am/?nid=13>

²⁶ Տե՛ս, ՀՀ վիճակագրական Կոմիտե (ԱՐՄՍՏԱՏ), http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-13-2017.px/table/tableViewLayout1/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6

²⁷ Տե՛ս, ՀՀ վիճակագրական Կոմիտե (ԱՐՄՍՏԱՏ), http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_24%20Social%20issues/PS-si-7-2018.px/table/tableViewLayout2/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6

ԱՂՋԻԿ (ԵՎ ՏՂԱ) ԵՐԵՄԱՆԵՐԸ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներում ընտրելով 2018 թ.-ի **զենդերային վիճակագրությունը** և ուսումնասիրելով 2018 թ.-ի «Հայաստանի կանայք և տղամարդիկ» հրապարակումը՝ կարելի է պնդել, որ աղջիկ և տղա երեխաների մասին տվյալները որոշ բաժիններում ամբողջությամբ են ներկայացված (0-17տ.), իսկ մյուսներում՝ մասամբ (0-4, 0-14 տ.):


Ժողովրդագրություն բաժնում աղջիկ և տղա երեխաների մասին ամբողջական տվյալները վերաբերում են նոր ծնվածներին (սեռերի հարաբերակցության գործակիցները ըստ մարզերի ու ծննդի կարգի), իսկ մյուս տվյալներում նրանք մասամբ են (0-14 տ.) ներկայացված: Օրինակներ՝

Սեռերի հարաբերակցությունը ծննդյան պահից²⁸

Տարի Year	Ա/Գ U/G	Տ/Բ S/B	Սեռերի հարաբերակցությունը ծննդյան պահից Sex ratio at birth
2010	20 856	23 969	1.15
2011	20 213	23 127	1.14
2012	19 737	22 743	1.15
2013	19 638	22 152	1.13
2014	20 162	22 869	1.13
2015	19 630	22 133	1.13
2016	19 147	21 445	1.12
2017	17 969	19 731	1.1

Նշում. Սեռերի հարաբերակցությունը ծննդյան պահից հաշվարկվում է ծնված տղաների և աղջիկների թվաքանակների հարաբերությամբ, որի կենսաբանորեն ձևավորված նորմալ միջակայքը՝ ծնված յուրաքանչյուր աղջկա հաշվով կազմում է 1.04 – 1.06 տղա:

Սեռերի հարաբերակցության գործակիցն ըստ ծննդի կարգի, 2002-2017 թթ.²⁹



²⁸ Նույն տեղում



²⁹ Նույն տեղում

Միգրացիայի բաժնում, թեև օտարերկրացիների սեռա-տարիքային բաշխումը տրվում է 0-14 և 15-29 տարիքային միջակայքով, ապաստան հայցողների ու փախստականների տվյալներում ամբողջությամբ տեսանելի են ն' աղջիկ, ն' տղա երեխաները (0-17 տ.): Օրինակ՝

2017 թ.-ին փախստականի կարգավիճակ շնորհիվ անձանց բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և քաղաքացիության երկրի³⁰

Կին

Տղամարդ



Առողջապահության բաժնում, աղջիկ և տղա երեխաների ակտիվ տուբերկուլյոզը և չարորակ նորագոյացությունները մասամբ են (0-14 տ.) ներկայացված: Հոգեկան խանգարումով հիվանդացությունն առաջին անգամ հաստատված ախտորոշումով և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի հայտնաբերման նպատակով հետազոտված քաղաքացիները և հետազոտության արդյունքները ներկայացված են ըստ սեռի, բայց ոչ ըստ տարիքի: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Առողջապահության ազգային ինստիտուտի 2019 թ.-ի վիճակագրական տարեգրքում, ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի հայտնաբերման նպատակով հետազոտված քաղաքացիների սեռա-տարիքային կազմը կա՝ 0-4, 0-14, 15-24, իսկ ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի հետազոտության արդյունքները ըստ տարեթվերի ներկայացնելիս՝ հղիների տողում նշվում է «այդ թվում՝ 15-24 տարեկան»³¹:

Հարկ է նշել, որ 2019 թ.-ի «Առողջություն և Առողջապահություն» վիճակագրական տարեգրքում մի շարք ցուցանիշների համար (օրինակ՝ մահացության պատճառները, կյանքում առաջին անգամ հաստատված ախտորոշումով հիվանդներ/տուբերկուլյոզ) տրվում է սեռա-տարիքային բաշխումը (0-4, 5-14, 15-

³⁰ Նույն տեղում

³¹ Տե՛ս, Դ. Անդրեասյան և այլք, 77 էջ, «Առողջություն և Առողջապահություն» վիճակագրական տարեգրք, 2019, Երևան <http://nih.am/assets/pdf/atvk/5e467314d98ef3cc83ecaa50bb7e135d.pdf>

19), որոնք կօգնեն հետազոտողին աղջիկ և տղա երեխայի մասին մասնակի տվյալներ ստանալ³²:

ՆՀՀ ցուցանիշը (ներգատական համակարգի հիվանդությունները) որոշ դեպքերում տրվում է ն՛ ըստ սեռի, ն՛ ըստ երեխաների տարիքի, հաճախ նաև առանձնացվում է 15-17 տարիքային միջակայքը՝ երեխայի տարիքային խումբ, որը տվյալներում հաճախ երիտասարդների հետ է միավորված:

Մի շարք այլ ցուցանիշներով նույնպես (օրինակ՝ բնակչության հիվանդացությունը չարորակ նորագոյացություններով, կյանքում առաջին անգամ ԱՇՀՀ (արյան շրջանառության համակարգի հիվանդություններ) հաստատված ախտորոշումով հիվանդների դեպքում) աղջիկ և տղա երեխաների մասին կարելի է **ԱՄԲՈՂՋԱԿԱՆ** տվյալներ ստանալ և որոշ դեպքերում ըստ յուրաքանչյուր մարզի: Այստեղ կիրառվում է 0-14 և 15-17 տարիքային միջակայքը:

2018 թ.-ի «Հայաստանի կանայք և տղամարդիկ» հրապարակման մեջ հղիության արհեստական ընդհատումները ներկայացված չեն ըստ տարիքի: Մահացությունն ըստ պատճառների և տարիքային խմբերի մասամբ է տեսանելի դարձնում աղջիկ և տղա երեխաներին (0-15, 15-44): Առանձին ներկայացվում են 0-4 տարեկան երեխաների մահացությունները ըստ սեռի և տարեթվերի³³:

Սոցիալական սպասելիության և սոցիալական պաշտպանության բաժնում կա 2 տվյալ է առանձնացված սեռով՝ ա) խնամյալները տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններում (2010թ. և 2017թ.) և բ) կենսաթոշակառուները: (Աղքատությանը նվիրված անգլերեն մի զեկույցում կա Մանկական աղքատություն բաժին, որտեղ աղքատ և ծայրահեղ աղքատ աղջիկ և տղա երեխաների տվյալներն են ներկայացված³⁴): Երեխայի աշխատանք բաժնում բոլոր տվյալները վերցվել են 2016 թ.-ին լույս տեսած «Հայաստան. Երեխայի

³² Տարեգրքի հեղինակը նշում է, որ կան ցուցանիշներ, օրինակ՝ շնչառական համակարգի օրգանների հիվանդությունները, որոնք կան միայն տարիքային խմբով (ոչ սեռով) և կան ցուցանիշներ, օրինակ՝ սրտանոթայինը, շաքարային դիաբետը, քաղցրեղը, որոնք սեռատարիքային խմբերով առանձնացվում են:

³³ Տե՛ս նաև, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf

³⁴ Տե՛ս նաև, Armenia- Poverty Snapshot over 2007-2018, https://www.armstat.am/file/article/poverty_2018_english_2.pdf

աշխատանքի ազգային հետազոտություն³⁵ » զեկույցից, որը աղջիկ և տղա երեխաների մասին տալիս է մանրամասն տվյալներ աշխատաշուկայի բոլոր ցուցանիշներով՝ երեխաների տնտեսական ակտիվության, աշխատող երեխաների արգելված համարվող աշխատանքում ներգրավվածության, զբաղված երեխաների քանակի, զբաղվածության կարգավիճակի, գործունեության ոլորտի, շաբաթական աշխատած ժամերի, աշխատելու պատճառների և այլ ցուցանիշներով:

«Հայաստան. Երեխայի աշխատանքի ազգային հետազոտությունը» օրինակելի վիճակագրական զեկույց է թե՛ ընտրված ցուցանիշների և թե՛ սեռա-տարիքային խմբերի բաշխվածության առումով: Այն հնարավորինս մանրամասն **ՆԿԱՐԱԳՐՈՒՄ և ՏԵՄԱՆԵԼԻ** է դարձնում աղջիկ և տղա երեխաներին աշխատանքի շուկայում և վերհանում է երեխայի աշխատանքի հետ կապված մի շարք խնդիրներ, օրինակ՝ 12000 աղջիկ և 27500 տղա երեխա 2015 թ.-ին ներգրավված է եղել արգելված համարվող աշխատանքում և նրանց ճնշող մեծամասնությունը ներգրավվել է վնասակար աշխատանքում³⁶:

Այնուամենայնիվ, աշխատանքային ռեսուրսների, գործազրկության, զբաղվածության, տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության 2017 թ.-ի տվյալներում աղջիկ և տղա երեխաները նորից դարձել են անտեսանելի, քանի որ ներկայացվել են ըստ 15-19 կամ 15-24 տարիքային միջակայքերի³⁷:

Կրթություն և գիտություն բաժնում աղջիկ և տղա երեխաների 3 ցուցանիշ է ներկայացվել՝ ա) 0-5 տ. երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում ըստ տարիքային խմբերի (2010 և 2017 թթ.), բ) հանրակրթական (տարրական, հիմնական և ավագ) դպրոցներում համախառն ընդգրկվածության ցուցանիշը ըստ սեռի և գ) հանրակրթական (տարրական, հիմնական և ավագ) դպրոցներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունում սեռային հավասարության ցուցանիշները (gender gap index) 2010 և 2017 թթ.-ին: Օրինակ՝

³⁵ Տե՛ս, «Հայաստան. Երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն», 2016, *Աշխատանքի միջազգային կազմակերպություն և ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն*, <https://www.armstat.am/am/?nid=81&id=1866>

³⁶ Տե՛ս, «Հայաստան. Երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն», 2016, *Աշխատանքի միջազգային կազմակերպություն և ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն*, էջ 8, <https://www.armstat.am/am/?nid=81&id=1866>

³⁷ ՀՀ Վիճակագրական Կոմիտե, https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf

Հանրակրթական դպրոցներում սեռային հավասարության ցուցանիշն ըստ հանրակրթական ծրագրերի մակարդակի, 2010 թ. և 2017 թ.

	2010	2017
<i>Հանրակրթական դպրոցներ</i>	1.04	1.03
<i>Տարրական</i>	1.01	1
<i>Հիմնական</i>	1.01	1.01
<i>Ավագ</i>	1.06	1.17

Տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցն է հավասարության ցուցանիշը

Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (emis.am) հնարավորություն է տալիս աղջիկ և տղա երեխաների մասին ավելի շատ ցուցանիշներով տվյալներ ստանալ:

Իրավախախտումներ բաժնում տրված են հանցագործություն կատարած և դատապարտված աղջիկ և տղա երեխաների տվյալները:

Հանցագործություն կատարած և դատապարտված անձինք, 2017

	Հանցագործություն կատարած անձինք, 2017		Դատապարտված անձինք, 2017	
	Կ	Տ	Կ	Տ
14 -17 տարեկան	28	313	4	92
18 +	1 391	10 186	181	2 229
Ընդամենը	1 419	10 499	185	2 321

2019 թ.-ի հունվար-փետրվար ամիսների Վիճակագրական կոմիտեի հրապարակման սոցիալ-ժողովրդագրական հատվածում կա իրավախախտումներ ենթաբաժին, որը ՀՀ ոստիկանության ամփոփ տեղեկատվությունն է և ներկայացնում է հանցագործությունները միայն ըստ հանցատեսակների և գրանցված հանցագործությունների քանակն ըստ ծանրության և մարզերի/Երևանի/Զվարթնոց օդանավակայանի ³⁸ : Այս տեղեկատվությունը հնարավորություն չի տալիս տվյալներից օգտվողին հասկանալ, թե, օրինակ՝ աղջիկ երեխաների որ մասն ինչ հանցագործություն է կատարել 2017-ին:

³⁸ Տե՛ս, ՀՀ Վիճակագրական Կոմիտե, https://www.armstat.am/file/article/sv_02_19a_520.pdf

Աղջիկ երեխային վերաբերող ոչ մի հոդված կամ դրույթ չի հայտնաբերվել երեխաներին առնչվող հիմնական օրենքներում՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքում³⁹ և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում⁴⁰, ինչպես նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում⁴¹:

Այս պահի դրությամբ նախարարությունների մի մասի ռազմավարությունները նախագիծ են և լրամշակման փուլում են (օրինակ՝ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն, Առողջապահության նախարարություն), իսկ մյուսները դեռ չեն մշակել նոր ռազմավարություններ (օրինակ՝ Կրթության, Գիտության, Սպորտի և Մշակույթի նախարարությունը, Տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն ծառայությունը): Անդրադարձը ռազմավարություններին հնարավորություն է տալիս աղջիկ երեխայի տեսանելիության մասին որոշ դիտարկումներ անել:

Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ռազմավարության նախագծում հայտնաբերվել է մեկ անդրադարձ Աղջիկ երեխային, որտեղ մասնավորապես ասվում է.

«Ռազմավարությամբ նախատեսում է... Վերաձևավորել սոցիալական պաշտպանության քաղաքականությունները՝ կիրառելով կենսափուլային մոտեցում, ինչը թույլ է տալիս աղքատությունից դուրս բերել և դրա հետևանքներից պաշտպանել ընտանիքներին, աղջիկներին և տղաներին (սոցիալական պաշտպանությունը որպես ներդրում մարդկային կապիտալի համար, այլ ոչ թե դրան ուղղված ծախս)»⁴²:

ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրում ⁴³ գերակայություններից մեկն անդրադառնում է

³⁹ Տե՛ս, ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, ՀՕ-123-Ն, <https://www.arlis.am>

⁴⁰ Տե՛ս, Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք, ՀՕ-59, <https://www.arlis.am>

⁴¹ Տե՛ս, Հանրակրթության մասին ՀՀ օրենք, ՀՕ-160-Ն, <https://www.arlis.am>

⁴² Տե՛ս, Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ռազմավարություն, <https://www.e-draft.am/projects/1928/about>

⁴³ Տե՛ս, ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը, <http://www.mlsa.am/?p=9920>

իրավախախտում կատարած, բռնության ենթարկված, հակասոցիալական վարք դրսևորած անչափահասների վաղ հայտնաբերումը, բռնության դեպքերի կանխարգելումը: Աղջիկ երեխան առանձնացվել է միայն վերը նշված գերակայությանը վերաբերող միջոցառումներում, որտեղ մասնավորապես ասվում է.

«Կազմակերպել քննարկումներ՝ 12-18 տարեկան իգական սեռի, դժվար դաստիարակվող, շեղված վարքագծով և հատուկ դաստիարակության կարիք ունեցող անչափահասների համար վերականգնողական կենտրոնի ստեղծման ուղղությամբ»⁴⁴:

ՀՀ 2019-2023 թվականների զբաղվածության ռազմավարության ⁴⁵ այլ քաղաքականությունների համադրման և համաժամեցման (սինխրոնիզացիայի) (5.1) բաժնում նշվում է, որ զբաղվածության ռազմավարությունը պետք է նախատեսի «ուժեղացնել աշխատունակ տարիքի բնակչության զբաղվածությունը և նվազեցնել նպաստից կախվածությունն ու խոցելիությունը...»⁴⁶ և «զբաղվածության արդյունքում կայուն ընտանիքների ձևավորումը և այդ ընտանիքներում երեխայի հետագա դաստիարակության ապահովումը»⁴⁷, այն տեսանելի չի դարձնում աղջիկ երեխային զբաղվածության ոլորտում:

Առողջապահական համակարգի հնգամյա (2020-2025 թվականներ) զարգացման ռազմավարությունը ⁴⁸ անդրադառնում է տարբեր տարիքի երեխաների խնդիրներին, այն է՝ մահացության պատճառներին, տարածված հիվանդություններին, սնուցմանը, թերաճությանը, գերքաշությանը, հոգեկան առողջությանը, պալիատիվ բժշկական օգնությանը, անվտանգության ապահովմանը և դժբախտ պատահարների կանխարգելմանը, մանկական նստատեղերի օգտագործմանը, հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին: Այնուամենայնիվ, Աղջիկ երեխայի մասին ոչ մի դրույթ չի առանձնացվել ռազմավարությունում:

⁴⁴ Նույն տեղում

⁴⁵ Տե՛ս, ՀՀ 2019-2023 թվականների զբաղվածության ռազմավարություն, <https://www.e-draft.am/projects/1860/about>

⁴⁶ Նույն տեղում

⁴⁷ Նույն տեղում

⁴⁸ Տե՛ս, ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա (2020-2025 թվականներ) զարգացման ռազմավարություն, <https://www.e-draft.am/projects/1958/about>

Թեև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրում⁴⁹ Աղջիկ երեխայի մասին ոչինչ չի նշվել (միայն հղում է արվել «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային, ի դեպ՝ առանց ներառելու կամընտիր արձանագրությունները), ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրում⁵⁰ Աղջիկ երեխան ուշադրության կենտրոնում է հայտնվել: Գենդերային ռազմավարությունը անդրադարձել է Աղջիկ երեխային ստորև նկարագրված գերակայություններն ու հարցերը քննարկելիս.

- Տեղահանված կանանց և աղջիկների հատուկ պաշտպանության ապահովումը
- Տարբեր սոցիալական պատճառներով դպրոց չհաճախող երեխաների (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցողների, ազգային փոքրամասնություններին պատկանողների և գյուղական բնակավայրերում ապրող աղջիկների) բացահայտումը և դպրոցներում նրանց ներառումը
- Կանանց և աղջիկների բոլոր խմբերի ներառականության ապահովումը
- Պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների թվի իջեցումը և աղջիկ երեխաների արժևորումը
- Կանանց և աղջիկների տարբեր խմբերի համար տարբեր ծրագրերի առկայությունը՝ ելնելով գնահատված կարիքներից՝ տարեց, հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները, սահմանամերձ տարածաշրջանում բնակվող կանայք և աղջիկներ, կրոնական, ազգային, սեռական տարբեր խմբերին պատկանող կանայք և աղջիկներ, փախստական կանայք և աղջիկներ և այլն
- Ընդլայնված հնարավորությունները կանանց և աղջիկների համար՝ սպորտով զբաղվելու և արդյունքներ գրանցելու ուղղությամբ, այդ թվում՝

⁴⁹ Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն և դրանից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի, <https://www.e-draft.am/projects/1871>

⁵⁰ Տե՛ս, ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագիր, <https://www.e-draft.am/projects/1712>

հաշմանդամություն ունեցողների, ազգային փոքրամասնություններին պատկանող և գյուղական բնակավայրերում ապրողների համար:

Հարկ է նշել, որ գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը օրինակելի է Աղջիկ երեխայի տեսանելիությունը ապահովելու տեսանկյունից: Այնուամենայնիվ, այն չի ամրագրում՝ վիճակագրական տվյալներում Աղջիկ երեխայի տեսանելիությունը խրախուսող կամ պահանջող դրույթ:

ՀՀ Կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը⁵¹ Աղջիկ երեխային առանձնացնում է թիրախ 5-ը քննարկելիս, որն առնչվում է կրթության բոլոր մակարդակներում բոլոր խոցելի խմբերի հավասար մասնակցության ապահովման հարցին.

«Կրթության բոլոր մակարդակներում անհրաժեշտ է ստեղծել որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորություններ բոլորի համար, ներառյալ՝ խոցելի խմբերի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կյանքի դժվարին պայմաններում հայտնված աղջիկների և տղաների, կանանց և տղամարդկանց: Կրթության ոլորտում իրականացվող բոլոր ծրագրերը, բարեփոխումները, նախաձեռնություններն ու մշակումները պետք է հաշվի առնեն սովորողների առանձին խմբերի և անհատների կարիքները, նախատեսեն դրանց արձագանքման համապատասխան մոտեցումներ»⁵²:

ՀՀ Միգրացիայի քաղաքականության ռազմավարությունում⁵³ երեխաներին ըդհանրապես անդրադարձ չի արվում:

⁵¹ Տե՛ս, ՀՀ Կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր, <https://www.e-draft.am/projects/528/about>

⁵² Նույն տեղում

⁵³ Տե՛ս, ՀՀ Միգրացիայի քաղաքականության ռազմավարություն, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=89250>

Անդրադառնալով պետական վիճակագրական տվյալներում Աղջիկ երեխայի տեսանելիությանը՝ փորձագետները վեր են հանում տվյալների հետ կապված մի շարք խնդիրներ: Փորձագետների համար առավել կարևորներն են՝

- Բավարար վիճակագրական տվյալների բացակայությունը
- Տվյալներ, որոնց էլեկտրոնային տարբերակը գոյություն չունի՝ միայն թղթային տարբերակներն են առկա
- Ոչ պատշաճ որակի պատճառով տվյալների անօգուտ լինելը, օգտագործման ենթակա չլինելը
- Տվյալների հուսալիության խնդիրը՝ հավաքագրման մեթոդի և հավաքագրված տվյալների (ներառյալ՝ ինքնալրացված հարցաթերթերի) ոչ պատշաճ որակը
- Տարբեր կամ/և միևնույն բազաներում նույն ցուցանիշների արժեքների տարբերությունները
- Մի քանի փոփոխականներ իրար հետ փոխկապակցելու անհնարինությունը
- Տվյալներ և տվյալների բազաներ, որոնք համադրելի չեն, մեկը մյուսի հետ խաչելի չեն
- Ընտրված ցուցանիշներով մշտադիտարկումներ անելու համար՝ վիճակագրական տվյալների անհրաժեշտ պարբերականության ապահովման խնդիրը
- Բազաներում տվյալներ գտնելու հարցը՝ բազաները օգտագործողների համար հարմար (user-friendly) ձևաչափով մատուցումը
- Այն տվյալների բազան, որոնց հիման վրա գրվում են տարեգրքերը անհասանելի են իրենց նախնական տարբերակով՝ էքսել (excel) կամ այլ ձևաչափով
- Աղջիկ երեխաների մասին տվյալներ ստանալու համար, փորձագետները որոշ դեպքերում տվյալների բազայից ձեռքով՝ հատիկ-հատիկ հանում են արժեքները և հաշվարկում

Աղջիկ երեխայի մասին տվյալների հետ կապված բացերը իրենց հերթին այլ խնդիրների պատճառ են դառնում՝ սահմանափակում են ոլորտում հնարավոր հետազոտությունների, միջամտությունների, քաղաքականությունների և առաջարկությունների մշակումն ու իրականացումը: Վիճակագրական տվյալների թերացումները անմիջական ազդեցություն են ունենում աղջիկ և տղա երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող տարբեր կառույցների ապացուցահեն (evidence-based) գործողությունների մշակման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման վրա:

Ըստ փորձագետների՝ տարիների ընթացքում արձանագրվել է առաջընթաց տվյալների հավաքագրման ոլորտում (ըստ սեռ-տարիքային կազմի), օրինակ՝ 2014 թ.-ից շտապ օգնությունում ներդրվել է էլեկտրոնային վերլուծական համակարգ, որը հնարավորություն է տալիս տվյալ ժամանակահատվածի կանչերը առանձնացնել ըստ սեռի և տարիքի և այլ ցուցանիշների: Այսօր քայլեր են արվում փորձարկելու գենդերային բյուջետավորումը, որում հաշվի են առնվելու բոլոր աղջիկների և կանանց կարիքները (ներառյալ՝ հաշմանդամություն և այլ խոցելի հատկանիշներ ունեցողներին):

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունները նախկինում նորածին երեխաներին գրանցելիս ըստ սեռի տվյալներ չեն հավաքագրվել, սակայն միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության պահանջով այդ բացը լրացվել է և նորածին երեխաների սեռերի հարաբերակցության հետ կապված տվյալներն այսօր առավել քան հասանելի են: Երբ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, Վիճակագրական կոմիտեի և միջազգային փորձագետի համատեղ հետազոտությունը ցույց տվեց սեռերի միջև հարաբերակցության շեղումները և հարցն արդեն բարձրաձայնվեց հենվելով տվյալների վրա, օրենքում փոփոխություններ ներմուծվեցին⁵⁴՝ 2016 թ.-ից արգելվեց 12-22 շաբաթական երեխայի սեռով պայմանավորված ընդհատումը (12-րդ շաբաթում հնարավոր է որոշել երեխայի սեռը):

Աղջիկ և տղա երեխաների հարաբերակցությունը, ըստ փորձագետների, ներկայացված չի մի շարք թեմաներում, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող

⁵⁴ Տե՛ս, ՀՀ օրենքը «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին, ՀՕ-134-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107500>

երեխաների մասին կարևոր է իմանալ, թե որ երեխային են ավելի շատ լքում և որդեգրում և ինչու կամ կրթությունից ով է ավելի շատ դուրս մնում և ինչու կամ տուժողների և վկաների տվյալներում (ներառյալ՝ սեռական բռնությունը) սեռային հարաբերակցությունը կարող էր մի շարք հետաքրքիր հարցեր բարձրացնել:

Անդրադառնանք այսօր հաճախ քննարկվող երկու հարցի՝ աղջիկների վաղամուսնությանը և երեխայի աշխատանքին:

ՎԱՂԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Ըստ փորձագետների՝ վաղամուսնությունները ՀՀ-ում կազմում են 13%, ինչը նշանակում է, որ այս խնդիրը սխալ է վերագրել միայն ազգային փոքրամասնություններին, իսկ 13%-ը դեռ իրական վաղամուսնությունների մի մասն է՝ միայն գրանցվածը: ՀՀ Ընտանեկան օրենսգրքի Հոդված 10.-ում⁵⁵ մասնավորապես ասվում է, որ ամուսնության տարիքը 18-ն է, սակայն անձը կարող է ամուսնանալ և՛ 17 տարեկանում (երբ առկա է ծնողի, որդեգրողի, հոգաբարձուի համաձայնությունը) և՛ 16 տարեկանում (երբ առկա է ծնողի, որդեգրողի, հոգաբարձուի համաձայնությունը և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է): Հաշվի առնելով մշակութային առանձնահատկությունները՝ փորձագետները կասկածի տակ չեն դնում այն փաստը, որ 16 տարեկանում ամուսնանում են աղջիկ երեխաները, քանի որ չեն դիտարկվել դեպքեր, երբ տղա երեխան իրենից բարձր տարիքի աղջիկ երեխայի կամ կնոջ հետ է ամուսնանում: Հայաստանի Հանրապետության կողմից հաշվի է առնվել 2003 թ.-ի Կոմիտեի առաջարկությունը⁵⁶՝ օրենքով ամրագրել աղջիկ և տղա երեխաների համար ամուսնության նույն տարիքը: 2013 թ.-ի ամփոփիչ դիտարկումներում Կոմիտեն անդրադարձել է Եզդիական համայնքի վաղամուսնության խնդրին և առաջարկել է օրենքով սահմանված ամուսնության տարիքը կիրարկելուն զուգահեռ իրականացնել մի շարք միջոցառումներ՝ վաղ ամուսնության բացասական հետևանքների մասին ծնողների և համայնքերի ղեկավարների իրազեկվածության

⁵⁵ Տե՛ս, ՀՀ ընտանեկան օրենսգրքը, ՀՕ-123-Ն, Հոդված 10.,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119102>

⁵⁶ Տե՛ս, *Reporting status for Armenia*,

https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Countries.aspx?CountryCode=ARM&Lang=E
[N](#)

մակարդակը բարձրացնելու համար⁵⁷: 2014 թ.-ին ՄԱԿ-ը ընդունեց մի բանաձև, որով արգելեց երեխաների վաղ և բռնի ուժով ամուսնությունը⁵⁸ և Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը գործողությունների առաջարկություններ մշակեց՝ երեխայի և բռնի ուժով ամուսնությունները կանխելու համար⁵⁹: Այսօր արդեն մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային մարմինները, ինչպես նաև Կոմիտեն, առաջարկում են բոլոր պետություններին՝ ամուսնության բոլոր ձևերի նվազագույն տարիքը սահմանել 18 տարեկանը: ՀՀ օրենքը հակասում է այս դրույթին: Փորձագետներն էլ պնդում են, որ եթե օրենքով արգելվի 18 տարեկանից ցածր ամուսնությունը, վաղամուսնությունների պրակտիկան չի փոխվի, փոխարենը՝ կնվազի ամուսնությունների գրանցումը, ինչի արդյունքում տվյալների և իրականության միջև բացը էլ ավելի կխորանա: Միակ լուծումը, ըստ փորձագետների, վարքային փոփոխությունների խրախուսումն է կրթության միջոցով:

ԵՐԵՒԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀՀ վավերացրել է այն կոնվենցիաները («Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա⁶⁰, «Նվազագույն տարիքի մասին» կոնվենցիա⁶¹, «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիա⁶²), որոնք պաշտպանում են աղջիկ և տղա երեխաներին տնտեսական շահագործումից: Թեև 2005 թ.-ին ՀՀ սահմանել է 16 տարեկանը՝ «իր տարածքում զբաղվածության կամ աշխատանքի ընդունվելու և իր տարածքում գրանցված փոխադրամիջոցների ոլորտում աշխատանքի ընդունվելու նվազագույն տարիք»⁶³, 2012 թ.-ի Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը, հենվելով ուսումնասիրությունների վրա, նշել է, որ 14 տարեկանից փոքր

⁵⁷ *Տե՛ս, Reporting status for Armenia,*

https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Countries.aspx?CountryCode=ARM&Lang=EN

⁵⁸ *Տե՛ս, United Nations General Assembly, Sixty-ninth session, Agenda item 65 (a),*

<https://www.refworld.org/docid/53999c1b4.html>

⁵⁹ *Տե՛ս, Recommendations for actions against child and forced marriages,*

<https://www.ohchr.org/Documents/Issues/Women/WRGS/CEFM/RecommendationsForActionEbook.pdf>

⁶⁰ *Տե՛ս, Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա,*

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503>

⁶¹ *Տե՛ս, Նվազագույն տարիքի մասին կոնվենցիա, <http://mlsa.am/wp-content/uploads/2016/11/ՄԱԿ-ի-Նվազագույն-տարիքի-մասին.pdf>*

⁶² *Տե՛ս, Կոնվենցիա Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի մասին,*

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=29926>

⁶³ *Տե՛ս, ՀՀ Ազգային ժողովի որոշումը «Նվազագույն տարիքի մասին» կոնվենցիան (Գից*

հայտարարությամբ) վավերացնելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=4309>

երեխաները առանց ծնողի կամ խնամակալի համաձայնության ներգրավվել են տարբեր աշխատանքներում⁶⁴: Կոմիտեն իր բոլոր ամփոփիչ դիտարկումներում անդրադարձել է երեխայի աշխատանքին և վերջին զեկույցում իր անհանգստությունն է հայտնել այն փաստի առիթով, որ 14 տարեկանից փոքր երեխաները դպրոցից դուրս են գալիս, որպեսզի աշխատեն ոչ ֆորմալ սեկտորում՝ գյուղատնտեսություն, մեքենաներին սպասարկող կետերում, շինարարությունում, ծանր մետաղների հավաքման աշխատանքներում և ընտանեկան բիզնեսներում⁶⁵: Կոմիտեն հորդորում է պետությանը երաշխավորել «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի Հոդված 32.-ի և աշխատանքային օրենսդրության համապատասխանեցումը և առկա օրենքների արդյունավետ կիրարկումը⁶⁶: Թեև, Աշխատանքային օրենսգրքի Հոդված 140-ը⁶⁷ սահմանում է տարբեր տարիքային խմբերի (մինչև 7 տ., 7-11 տ., 12-13 տ., 14-15 տ., 16-17տ.) համար օրեկան և շաբաթական կտրվածքով աշխատաժամանակի առավելագույն չափը, վերահսկողության մեխանիզմները առկա չեն: «Հայաստան. Երեխայի աշխատանքի ազգային հետազոտությունը⁶⁸» տրամադրում է բավարար տվյալներ աղջիկ և տղա երեխաների աշխատանքում ներգրավվելու փորձառությունների մասին՝ վերհանելով օրենքի և պրակտիկայի անհամապատասխանության բոլոր խնդիրները: Փորձագետների դիտարկումները ցույց են տալիս, որ երեխայի աշխատանքը պետական մարմինների և դպրոցների մակարդակով արդարացվում է և դիտվում՝ որպես դաստիարակչական բնույթի գործունեություն, օրինակ՝ ջերմոցում աշխատող երեխան սովորում է բույսերի հետ շփվել: Ըստ փորձագետների՝ համոզվելու համար, որ նմանատիպ աշխատանքները չեն քողարկում շահագործումը, պետք է ոլորտը կարգավորել հստակ օրենսդրական մոտեցումներով: Հարկ է թերևս հասկանալ, թե ինչ մեխանիզմների միջոցով

⁶⁴ Տե՛ս, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեին, 2012

⁶⁵ Տե՛ս, *Reporting status for Armenia*,

https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Countries.aspx?CountryCode=ARM&Lang=EN

⁶⁶ Նույն տեղում

⁶⁷ Տե՛ս, ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, ՀՕ-124-Ն,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126314>

⁶⁸ Տե՛ս, «Հայաստան. Երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն», 2016, *Աշխատանքի միջազգային կազմակերպություն և ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն*,

<https://www.armstat.am/am/?nid=81&id=1866>

հնարավոր կլինի հավաստիանալ, որ կամավորության սկզբունքով երեխայի աշխատանքը չի խանգարում երեխայի կրթությանը և հանգստին:

ԱՂՋԻԿ ԵՐԵՒԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ

2007 թ.-ին Յունիսեֆը հրատարակել է 3 մասից բաղկացած Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան կիրառելու ձեռնարկ⁶⁹՝ հիմնվելով Կոմիտեի 300-ից ավել ամփոփիչ դիտարկումների վրա: Ձեռնարկում սահմանվում է երեխան, հակախտրականությունը (վերջինիս կիրարկումը) և խտրականության բոլոր հիմքերը, Երեխայի լավագույն շահը (վերջինիս արտացոլումը օրենսդրությունում) և պետությունների պարտավորությունները, Կոնվենցիայի իրավունքների կիրարկումը և այլն: Այս և այլ թեմաները քննարկելիս՝ առանձնացվել են Աղջիկ երեխայի խնդիրներները և դրանց դեմ պայքարելու անհրաժեշտությունը:

- Հատուկ ուշադրության արժանացնել Աղջիկ երեխայի իրավունքների պաշտպանությունը, քանի որ հայրիշխանական արժեհամակարգը սահմանափակում է այդ իրավունքների իրացումը (ներառյալ՝ կրթության և առողջության իրավունքը):
- Վերացնել բոլոր ձևերի խտրականությունը Աղջիկ երեխայի հանդեպ (բոլոր հիմքերով, ներառյալ՝ ֆիզիկական և մտավոր առողջության հիմքով, պարենային զամբյուղի սննդամթերքներից օգտվելու հնարավորության զրկանքի հիմքով և այլն): Մասնավորապես ուշադրություն դարձնել այն երեխաների առողջությանը, ովքեր խտրականության են ենթարկվում իրենց աղքատության, հաշմանդամության, հեռավոր գյուղական համայնքներում ապրելու, բնիկ/էթնիկ խմբի պատկանելու, ապաստան փնտրելու, փախստականի կարգավիճակ ունենալու և ոչ լեզալ միգրանտ լինելու պատճառով:
- Վերացնել Աղջիկ երեխայի հանդեպ ֆիզիկական և հոգեբանական բռնությունները, ներառյալ՝ ԶԼՄ-ներում և գովազդներում աղջիկներին նվաստացնող և շահագործող պատկերները, որոնք անհավասարություն և թերարժեքություն են սերմանում: Չպաշտպանված սեռական բռնությունը և

⁶⁹ *St ú, Implementation handbook for the Convention on the Rights of the Child*, https://www.unicef.org/publications/index_43110.html

սեռավարակները (ներառյալ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը) հատկապես խոցելի են դարձնում աղջիկ երեխաներին:

- Ուժեղացնել առողջապահական և կրթական համակարգերը և ընդհարձակել սոցիալական ապահովման համակարգերը՝ այն հասանելի դարձնելով մասնավորապես լուսանցքում հայտնված Աղջիկների (և տղաների) համար:
- Խրախուսել Աղջիկ երեխաների առողջությունը և կենսունակությունը՝ կանխարգելելով աղջիկ երեխաների մահացությունը (ներառյալ՝ մանկասպանությունը (infanticide), անցանկալի հղիությունների և ոչ ապահով աբորտների արդյունքում բարդությունները):
- Հավաստիանալ, որ դեռահաս աղջիկներն (ու տղաները) հնարավորություն ունեն ակտիվ մասնակցելու՝ իրենց առողջության և զարգաման պլանավորման հարցերում:
- Ընտանիքի պլանավորման խնդիրներում Աղջիկ երեխաները/երիտասարդ կանայք պետք է հավասար մասնակցություն ունենան տղաների/երիտասարդ տղամարդկանց հետ: (Կարևոր է ամուսնության նվազագույն և միևնույն տարիքը սահմանել աղջիկ և տղա երեխաների համար):
- Տվյալներ հավաքագրել հաշմանդամություն ունեցող երեխաների մասին և օգտագործել այդ տվյալները քաղաքականություն մշակելիս, հատուկ ուշադրության արժանացնելով հաշմանդամություն ունեցող այն երեխաներին, ովքեր առավել խոցելի են (կենտրոններից հեռու են ապրում, փախստական են, աղջիկ են և այլն)⁷⁰:

Խնդիրների ցանկը այսքանով չի սպառվում, 787 էջից բաղկացած հսկայածավալ ձեռնարկը անդրադառնում է երեխաների հետ կապված բոլոր խնդիրներին:

⁷⁰ *St ú, Implementation handbook for the Convention on the Rights of the Child, 2007, UNICEF, https://www.unicef.org/publications/index_43110.html*

Երեխաների պաշտպանության ցանցի կազմակերպություններին ուղարկվել էր մի քանի հարցից բաղկացած փոքրիկ հարցաթերթ: Հարցմանը մասնակցել է 9 կազմակերպություն, որոնցից 1-ի գործունեության թիրախ խումբը աղջիկ երեխաներն են, 7-ինը և՛ աղջիկ, և՛ տղա երեխաներն են, իսկ կազմակերպություններից 1-ն էլ անմիջականորեն երեխաների հետ չի աշխատում:

- Կազմակերպությունների մեծ մասը (6-ը) նշել է, որ իր գործունեության արդյունավետությունն ապահովվելու համար «որոշ չափով կարևոր է», որ երեխաների մասին տվյալները լինեն առանձնացված ըստ սեռի և տարիքի և միայն 3-ի համար է այս տարանջատումը «շատ կարևոր»:
- 2 կազմակերպություն «ընդհանրապես տվյալներ չի ստացել» և 1-ը «ստացել է անհրաժեշտ տվյալները ամբողջությամբ», երբ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարությունից և նրան կից ստորաբաժանումներից փորձել է տվյալներ երեխաների ստանալ (0-18 տ.) մասին ըստ և՛ սեռի, և՛ տարիքի:

1 կազմակերպություն «ստացել է տվյալները մասամբ», երբ Առողջապահության նախարարությունից և նրան կից ստորաբաժանումներից փորձել է տվյալներ ստանալ երեխաների (0-18 տ.) մասին ըստ և՛ սեռի, և՛ տարիքի:

1 կազմակերպություն «ստացել է անհրաժեշտ տվյալները ամբողջությամբ», երբ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից և նրան կից ստորաբաժանումներից փորձել է տվյալներ ստանալ երեխաների (0-18 տ.) մասին ըստ և՛ սեռի, և՛ տարիքի:

1 կազմակերպություն «ընդհանրապես տվյալներ չի ստացել», երբ Արտաքին գործերի նախարարությունից և նրան կից ստորաբաժանումներից փորձել է տվյալներ ստանալ երեխաների (0-18 տ.) մասին ըստ և՛ սեռի, և՛ տարիքի:

1 կազմակերպություն «ընդհանրապես տվյալներ չի ստացել», իսկ մյուսը «ստացել է տվյալները մասամբ», երբ Արդարադատության նախարարությունից և նրան կից ստորաբաժանումներից փորձել է տվյալներ ստանալ երեխաների (0-18 տ.) մասին ըստ և՛ սեռի, և՛ տարիքի:

1 կազմակերպություն «ստացել է տվյալները մասամբ», երբ Ոստիկանությունից փորձել է տվյալներ ստանալ երեխաների (0-18 տ.) մասին ըստ ն'սեռի, ն' տարիքի:

1 կազմակերպություն «ստացել է անհրաժեշտ տվյալները ամբողջությամբ», երբ մարզպետարանից, քաղաքապետարանից և դպրոցից փորձել է տվյալներ ստանալ երեխաների (0-18 տ.) մասին ըստ ն'սեռի, ն' տարիքի:

Այս տվյալը թեև ընդհանրացման ենթակա չէ, քանի որ հարցմանը մասնակցած կազմակերպությունների թիվը փոքր է, այնուամենայնիվ, այն ցույց է տալիս, որ Երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները միշտ չէ, որ ստանում իրենց անհրաժեշտ տվյալները՝ ըստ սեռի և տարիքի:

- Հարցմանը մասնակցած կազմակերպություններից 1-ը տարբերակել է իր գործողությունները կամ տվյալները ըստ ն'սեռի, ն' տարիքի ծրագրի մշակման փուլում, մյուսը՝ իրականացման փուլում, իսկ երրորդը՝ մշտադիտարկման և գնահատման փուլում:

«ընդամենը մի քանի բաղադրիչով է տարբերակվել, օրինակ՝ հիգիենայի վերաբերյալ խմբային աշխատանքները»: (մշակման փուլում)

«Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար ծրագիր, որի նպատակն է մատուցել կրթական, սոցիալական և վերականգնողական ծառայություններ մարզի հաշմանդամություն ունեցող երեխաների համար»: (իրականացման փուլ)

«ԶԱՆԳ իրավականացման, սոցիալականացման ծրագիր և Համայնքային կապեր ի նպաստ իրավական սոցիալականացման ծրագիր: (մշտադիտարկման և գնահատման փուլ)

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների մեծ մասը՝ 6-ը, երբևէ ոչ մի փուլում չի իրականացրել գործողությունների և տվյալների տարանջատում ըստ ն'սեռի, ն' տարիքի:

- Հարցմանը մասնակցած կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը՝ 8-ը, նախազօժեր կամ նախաձեռնություններ իրականացնելիս, թիրախավորում է երեխաներին ըստ տարիքի, որովհետև «գործողություններ իրականացնելիս հաշվի է առնվում երեխաների

տարիքային առանձնահատկությունները և տարիքին բնորոշ հետաքրքրությունները», «զարգացման առանձնահատկությունները տարբեր են», «փոփոխվում են երեխաների հետ աշխատանքի և թերապիաների մեթոդները՝ կապված տարիքի հետ», «0-6 տարեկան երեխաների խնամքն այլ բնույթ ունի, 6-ից բարձրը՝ այլ»:

Միայն 1 կազմակերպություն է ծրագրեր իրականացնելիս թիրախավորում երեխաների ըստ սեռի, այն էլ, որովհետև «ծրագրի կոնցեպտը ի սկզբանե այդպես է մշակվել»: Հարցվածներից ոչ մեկը չի թիրախավորում երեխաներին և՛ ըստ սեռի, և՛ ըստ տարիքի:

- Կազմակերպություններից 5-ը կարծում են, որ երեխաներին ըստ և՛ սեռի, և՛ տարիքի թիրախավորումը կնվազեցնի ծրագրերի/նախագծերի արդյունավետությունը, իսկ 4-ը կարծում են, որ արդյունավետությունը նույնը կմնա:

«Ըստ սեռի տարանջատելու ոչ մի դրական բացատրություն չեմ գտնում, սակայն, ըստ տարիքային խմբերի առանձնացնելը նպատակահարմար է խմբային աշխատանքներում»: (կնվազի)

«Մեր գործողություններում սեռը դեր չի խաղում, քանի որ նպատակահարմար է 2 սեռերի հավասար ներգրավվածությունը», «Արդյունքվետության գնահատում այս իմաստով երբևէ չեմ իրականացրել, հետևաբար չեմ կարող հստակ պնդում ներկայացնել, բայց որ աշխատանքի կազմակերպման, մարդկային ռեսուրսների ներգրավման և դրանից բխող ծախսերը հստակ կավելանան, դա՝ հաստատ»: (նույնը կմնա)

Թերևս որոշ կազմակերպություններ երեխաներին ըստ և՛ սեռի, և՛ տարիքի թիրախավորումը դիտարկում են «խտրական» մոտեցում. «ոչ, որովհետև միշտ փորձել ենք հավասար հարթության վրա դիտարկել մեր շահառուներին»: Այս տվյալները ցույց են տալիս, որ Երեխաների իրավունքներով պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների շրջանում ըստ սեռի և տարիքի թիրախավորումը չի ընկալվում պատշաճ ձևով:

Ստորև ներկայացված եզրակացություններն ու առաջարկությունները հիմնվում են զեկույցում տեղ գտած տեղեկատվության վրա:

- 2011 թ.-ի մարդահամարի, ԱրմՍտատԲանկի և 2018 զենդերային վերլուծության տվյալների նկարագրությունը ցույց տվեց, որ *հաճախ* Աղջիկ երեխայի մասին տեղեկատվություն ստանալ անհնար է, քանի որ տվյալները կա՛մ առանձնացված չեն ըստ սեռի, կա՛մ էլ տրվում են տարիքային այնպիսի միջակայքով (օրինակ՝ 15-19), որում երեխաները մասամբ «անհետանում» են: Այսպես, Աղջիկ երեխան *մասամբ* է տեսանելի վիճակագրական տվյալներում:

Առաջարկվում է 2020 թ.-ի մարդահամարում և ընդհանրապես պետության կողմից տրամադրված բոլոր տվյալներում Աղջիկ երեխային դարձնել *ամբողջությամբ* տեսանելի, այն է՝ տվյալներն առանձնացնել ըստ և՛ սեռի, և՛ տարիքի այնպես, որ 0-17 տարեկանների խումբը չտարրալուծվի այլ տարիքային խմբերի մեջ:

Վիճակագրական կոմիտեի կայքէջում Գենդերային վիճակագրությանը զուգահեռ ստեղծել առանձին տվյալների բազա Աղջիկ (և տղա) երեխաների վիճակագրության համար, որում պարբերաբար տվյալներ կներկայացվի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան կիրառելու ձեռնարկում ամփոփված ցուցանիշներով:

Ամրագրել և համահարթեցել երեխայի սահմանումը (0-17 տարեկան աղջիկներ ու տղաներ) տվյալների բոլոր բազաներում և վերլուծություններում:

Որպես օրինակելի զեկույց դիտարկել «Հայաստան. Երեխայի աշխատանքի ազգային հետազոտությունը», նախ, քանի որ առանձնացված է սեռատարիքային կազմը բոլոր ցուցանիշներում և երկրորդը՝ ընտրված ցուցանիշները վերհանում են հասարակական խնդիրները:

- ՀՀ հիմանական օրենքներում՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքում և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում բացակայում են Աղջիկ երեխայի մասին հոդվածները: Ոլորտային ռազմավարությունների ներկայացումը զեկույցում ցույց է տալիս, որ ոչ բոլոր ռազմավարություններն են անդրադարձել և

դիտարկել Աղջիկ (և տղա) երեխաներին որպես առանձին խմբի, իսկ որոշ ռազմավարություններ էլ մասամբ են անդրադարձել երեխաների՝ ոչ բոլոր հարցերում: Աղջիկ երեխայի տեսանելիությունը ապահովելու տեսանկյունից օրինակելի է գենդերային քաղաքականության ռազմավարությունը:

Առաջարկվում է հիմնական օրենքներում առանձին անդրադառնալ Աղջիկ երեխային, իսկ զարգացման բոլոր ռազմավարություններում՝ ն՝ աղջիկ, ն՝ տղա երեխաներին:

Ռազմավարություններում խրախուսել կամ պահանջել, որ տվյալ ոլորտին առնչվող վիճակագրական տվյալները ապահովեն աղջիկ և տղա երեխաների տեսանելիությունը ապահովեն:

Ռազմավարությունները մշակելիս օգտվել Գենդերային քաղաքականության ռազմավարությունում օգտագործված տրամաբանությունից և յուրաքանչյուր նպատակ/գերակայություն/միջոցառում քննարկելիս՝ առանձնացնել և շեշտել առավել խոցելի և լուսանցքում հայտնված խմբերին:

- Փորձագետները վեր են հանել պետական վիճակագրական տվյալների հետ կապված մի շարք խնդիրներ՝ անհրաժեշտ ցուցանիշներով տվյալների բացակայությունը, տվյալների հուսալիության խնդիրը, նույն ցուցանիշները տարբեր մարմինների կողմից տարբեր բանաձևերով հաշվարկելը, փոփոխականներն իրար հետ փոխկապակցելու անհնարիությունը, տվյալների բազաներ անհամադրելիությունը, ցուցանիշները մշտադիտարկելու համար անհրաժեշտ պարբերական թարմամացումները և այլն:

Առաջարկվում է ռեսուրսներ տրամադրել կամ հայթայթել պետական վիճակագրական տվյալներում փորձագետների կողմից թվարկված խնդիրները լուծելու համար:

- Աղջիկ երեխայի իրավունքների մասին կոնվենցիան կիրարկելու Յունիսեֆի գեկույցին հղում անելով՝ համառոտ ներկայացվել է Աղջիկ երեխային վերաբերող խնդիրների փոքրիկ մասը:

Առաջարկվում է խթանել Աղջիկ երեխայի խնդիրները վերհանող հետազոտություններն ու ուսումնասիրությունները, ինչպես նաև

դիվերսիֆիկացնել առկա գործողություններն ու ինտերվենցիաները՝ հաշվի առնելով զեկույցի այն դրությամբ, որոնք քննարկում են, թե ինչպես պետք է կոնվենցիայի իրավունքները կյանքի կոչվեն (Կոնվենցիայի իրավունքների կիրարկում բաժին):

- Երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ իրականացված փոքրիկ առցանց հարցման արդյունքները ցույց են տալիս, որ նախարարությունները և նրանց կից ստորաբաժանումները միշտ չէ որ տրամադրում են կազմակերպությունների համար անհրաժեշտ տվյալները՝ առանձնացված ըստ ն՛ սեռի, և՛ տարիքի: Կազմակերպությունների մի մասը (այս հետազոտությունը չի կարող ճշգրիտ թիվ ներկայացնել, թե որ մասը) երեխաներին ըստ ն՛սեռի, և՛ տարիքի թիրախավորումը ընկալում է «խտրական» մոտեցում:

Առաջարկվում է նախարարություններին և նրանց կից ստորաբաժանումներին քաջալերել տվյալները հավաքագրել և ներկայացնել՝ առանձնացված սեռով և տարիքով:

Երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին ներկայացնել տվյալները և գործողությունները ըստ սեռի և տարիքի թիրախավորելու նպատակը և գործառնություններն ու առավելությունները: